

**ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԱՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ ՓԻԹԵՐ
ԲԱԼԱՔՅԱՆԻ «ՃԱԿԱՏԱԳՐԻ ՄԵՎ ՇՈՒՆԸ» ՎԵՊՈՒՄ**

Տ.Է.ՄԱԼՈՒՅԱՆ

Հայկական եղեռնի թեման արծարծած ոչ մի գրող իր առաջ նպատակ չի դնում մեխանիկորեն պատկերել 1915թ. եղերական դեպքերը: Գիտաբանայնոր հեղինակ փորձում է տալ ցեղասպանություն իրական, բարոյահոգեբանական ու պատմաքաղաքական գնահատականը և լուսաբանել դրա պատճառահետևանքային ասպեկտը: Փիթեր Բալաքյանը իր նախորդների նման ցեղասպանությունը ներկայացնում է՝ ելնելով նշված դիրքորոշումներից: «Ճակատագրի Սև Շունը» խորհրդանշում է Հայ ժողովրդի պատմությունը, նրա դժվարին ճակատագիրը, նրա գլխով անցած փորձությունները:

Վեպը արտացոլում է հայկական եղեռնը՝ իր ողջ մասշտաբով և բարդությունը: Ամերիկահայ գրողը քննում է 1915թ. դեպքերը երեք տեսանկյունից:

Ինչպե՞ս է «Ճակատագրի Սև Շունը» վեպի հեղինակը լուսաբանում հայկական ցեղասպանությունը էթնիկական տեսանկյունից: Լինելով XXդ. առաջագեղ գրողներից մեկը՝ Բալաքյանը չէր կարող չդատապարտել 1915թ. ողբերգական իրադարձությունները: Հիշարժան է, որ սփյուռքահայ գրողը հայկական եղեռնի էթնիկական գնահատականը տալիս է ոչ թե իր կամ որևէ այլ հայ հերոսի անունից, այլ մի շարք օտարազգիների: Իր վեպի պատմական գլուխներում Բալաքյանը ներկայացնում է մի քանի այլազգի ականատեսների կատարած գրառումներ: Դրանցում 1915թ. ջարդերը խիստ քննադատվել են: Եղեռնի ականատեսը դարձած եվրոպացիներն ու ամերիկացիները խորին կարեկցանքով էին լցված սպանդի ենթարկվող հայության նկատմամբ: Հայկական ջարդերի օրերին այդ մարդկանց ապրածը մի քանի զգացմունքների խառնուրդ էր. խղճմտանք, մտահոգություն, գայրույթ և հիասթափություն: Հայկական ցեղասպանությունը նման տրամադրություններ էր առաջացրել, օրինակ, Թուրքիայում ԱՄՆ-ի դեսպան Հենրի Մորգենթաուի մեջ: Վեպի մի շարք դրվագներում մեջբերված են դեսպանի հուշագրություններ, որոնցում հայկական եղեռնը որակվում է որպես սոսկալի ոճրագործություն¹: Մորգենթաուի համոզմամբ, 1915թ. դեպքերը պետք է դատապարտվեին ողջ քաղաքակիրթ աշխարհի կողմից: ԱՄՆ-ի դեսպանը չէր սխալվում: Դրա վկայությունն է այն բուռն արձագանքը, որին արժանացան 1915թ. ողբերգական իրադարձությունները տարբեր ազգությունների պատկանող գրողների երկերում²:

«Ճակատագրի Սև Շունը» վեպի երկրորդ խնդիրը հայկական եղեռնի բարոյահոգեբանական և պատմական կողմերի լուսաբանումն է: Գրողը մանրակրկիտ վերլուծությունների միջոցով փորձում է վերհանել հայոց ցեղասպանության պատճառները: Բալաքյանը միակ ամերիկացի հեղինակն է, որին հաջողվել է լիովին օբյեկտիվ պատկերացում տալ հայկական եղեռնի

¹ Տե՛ս P. Balaqian, *Blanck Dog of Jate*, New York, 1997, p. 169:

² E. Groseclose, *Ararat*, New York, 1939. J. D. Passes, *Orient Express*, New York, 1922, N. Kazantakis, *Joda Raba*, New York, 1939.

դրդապատճառների մասին: Նրա հավաստմամբ, հայ ազգը ցեղասպանության զոհ դարձավ պանթուրքիզմի ծայրահեղական գաղափարախոսության իրականացման հետևանքով³: Բալաքյանը՝ իրավացիորեն հերքում է այն կարծիքը, ըստ որի, հայկական ջարդերը պայմանավորված էին հենց իրենց՝ հայերի, հակաթուրքական կողմնորոշումով ու նրանց դավաճանությամբ⁴: Ամերիկահայ գրողը համոզիչ ցույց է տալիս, որ սոցիալ-տնտեսական գործոնը ևս երկրորդական դեր է խաղացել հայկական ցեղասպանության իրականացման գործում⁵: Ավելին, Բալաքյանը համոզված է, որ 1915թ. զանգվածային տեղահանությունները հրահրված էին Գերմանիայի կողմից⁶: Այս իրողությունն աճանագրված է մի շարք պատմական աղբյուրներում⁷: Բայց և այնպես ճիշտ չէր լինի ասել, թե հայկական եղեռնի հիմնական պատճառը գերտերությունների քաղաքական սադրանքներն էին: Ինքը՝ Բալաքյանը, հավաստում է, որ 1915թ. հայկական ջարդերը բխում էին գլխավորապես թուրքերի շովինիստական մղումներից⁸: Թե «Ճակատագրի Սև Շունը» վեպի հեղինակը և թե մյուս ամերիկացի գրողները շարունակ պնդում են, որ հայկական ցեղասպանության շրջանում ապրող թուրքերը խավարամոլներ էին, երգվյալ շովինիստներ ու կրոնամոլներ: Բալաքյանի վեպի մի շարք դրվագներում այս բնորոշումները ստանում են իրենց հիմնավորումը⁹: Հեղինակը հանգում է այն օբյեկտիվ եզրակացությանը, որ հայկական ցեղասպանության իրականացման գործում վճռորոշ դեր է խաղացել այն անհամատեղելիությունը, որն առկա էր հայ և թուրք ժողովուրդների, նրանց կրոնների ու մշակույթների միջև¹⁰:

Հայկական եղեռնը ներկայացնելիս Փիթեր Բալաքյանն ըստ էության ոչ մի նոր բան չի հայտնում: Նրա առավելությունը է. Գրոսբլոուսի, Լ. Զավեն Սուրմեյանի, Փ. Նաջարյանի ու Մ. Առլենի նկատմամբ այն է, որ նա ցեղասպանությունը ներկայացնում է հստակ, համակարգված և երբեք չի հակադրվում պատմական փաստերին: Բալաքյանը հայկական եղեռնը պատկերում է լայն մասշտաբով: Իր այս առանձնահատկությամբ «Ճակատագրի Սև Շունը» շատ նման է Մայքլ Առլենի «Ուղևորություն դեպի Արարատ», Լ. Զ. Սուրմեյանի «Զեզ եմ դիմում, տիկնայք և պարոնայք» վեպերին և զգալիորեն տարբերվում է է. Գրոսբլոուսի «Արարատ», Փ. Նաջարյանի «Հիշողության դատերը» և Զ. Հաչյանի «Մամիկոն» վեպերից:

Ցեղասպանության թեմայից բացի, «Ճակատագրի Սև Շունը» վեպում բարձրացվում է ևս մեկ կարևոր հիմնախնդիր: Խոսքը վերաբերում է պանդիստությանը, որը մանրակրկիտ լուսաբանման է ենթարկվել սփյուռքահայ գրողի կողմից: Տարագրությունը 1915-ի Մեծ եղեռնի ուղղակի հետևանք էր: Հարյուր հազարավոր հայեր թուրք ազգայնամոլների կամքով սփռվեցին աշխարհի ամենատարբեր մասերում՝ լրացնելով վտարանդի ու անհայրենիք մարդկանց շարքերը: Առաջին հայացքից պանդիստ և պանդիստություն բառերը չեն առաջացնում այն ծանր տպավորությունը, ինչպես եղեռնը: Ծիշտ է,

³ Տե՛ս P. Balakian, նշվ. աշխ., էջ 157:

⁴ Նույն տեղում:

⁵ Նույն տեղում, էջ 169:

⁶ Նույն տեղում, էջ 152:

⁷ Տե՛ս V. N. Dadrian, German Responsibility in the Armenian Genocide, Cambridge, 1996, p. 54-64.

⁸ P. Balakian, նշվ. աշխ., էջ 153:

⁹ Նույն տեղում, էջ 153 - 154:

¹⁰ Նույն տեղում, էջ 153:

տարագրությունը անժամանակ մահվանից փրկեց հարյուր հազարավոր հայերի, հնարավորություն տվեց նրանց թեկուզ և օտար հողում ու օտար միջավայրում շարունակել իրենց փշոված կյանքը: Պանդխտության մեջ էր, որ հայությունը, թեկուզ և դժվարությամբ, վերաստեղծում է իր կյանքը, ընտանիքներ կազմում, օջախներ վառում, երեխաներ մեծացնում, գիտություն և մշակույթ ստեղծում և, վերջապես, փորձում լիակատար կործանումից փրկել աշխարհի հնադույն քաղաքակրթություններից մեկը: Այս ամենը, ինչ խոսք, անվիճելի է: Անվիճելի է, սակայն, և այն, որ տարագրությունը ուներ նաև բազմաթիվ խնդիրներ և հակասություններ, որոնք շատ հաճախ անլուծելի էին մնում: Ահա այդ խնդիրների մասին էլ Փիթեր Բալաքյանը գրում է իր «Ճակատագրի Սև Շունը» վեպում: Նա սփյուռքահայության կյանքը դիտում է լայն համայնապատկերով: Նրա ուսումնասիրության առարկան հայ տարագիրների առաջին, երկրորդ և երրորդ սերունդներն են, նրանց հոգեբանությունն ու մտածելակերպը, պանդխտության ընկալումն ու գնահատումը, վերաբերմունքը Ամերիկայի, տեղի ժողովրդի և վերջինիս մշակույթի նկատմամբ: Վեպում ակնբախ են հայ տարագիրների տարբեր սերունդների միջև եղած տարբերությունները: Առաջին սերունդը զարմանքով, իսկ երբեմն էլ չփոթմունքով է դիտում ամերիկյան կյանքը: Թուրքահայաստանից գաղթած այս մարդկանց համար այդ երկրում ամեն բան նորություն էր: Նրանց համար անծանոթ ու անհասկանալի էին ամերիկյան բարքերն ու սովորույթները, տեղի բարոյական ըմբռնումները և արժեքների համակարգը: Հենց սկզբից էլ հայ տարագիրը զգում է, որ ինքը հայտնվել է օտար հողում, որտեղ տիրող կարգերին ինքը դեռ երկար ժամանակ չի կարող համակերպվել: Ահա այսպիսի իրավիճակում է հայտնվում «Ճակատագրի Սև Շունը» վեպի հերոսուհի Նաֆինա Արուսյանը, որի նախատիպը, ի դեպ Փիթեր Բալաքյանի տատն էր: Ամերիկահայ գրողը իր վեպում խոսում է այն մասին, թե ինչպես է իր տատը վերաբերվում ամերիկյան կուլտուրային: Դիտարկելով իր նոր բնակավայրի կյանքը՝ Նաֆինա Արուսյանը փորձում է հասկանալ այն: Ի տարբերություն որոշ հայ պանդուխտների, նա չի քննադատում ամերիկյան մշակույթը, ատելություն չի դրսևորում տեղի բարքերի ու հոգևոր ըմբռնումների նկատմամբ: Հայ տարագիրների առաջին սերնդի մեջ քիչ էին այնպիսիները, որոնք «Ճակատագրի Սև Շունը» վեպի հերոսուհու նման էին վերաբերվում իրենց երկրորդ հայրենիքին: Ավելին, հայ առաջին գաղթականները հակված էին ծայրահեղ տեսակետներ արտահայտել իրենց ապաստան տված երկրի մասին: Այն, որ ԱՄՆ-ը կատարելապես նման էր Թուրքահայաստանին, միանգամայն պարզ էր ու օրինաչափ: Հայերն իրենց հարադատ հողում ապրում էին նահապետական նիստուկացով, օժտված էին յուրահատուկ հոգեբանությամբ և մտածելակերպով և ունեին միանգամայն այլ ազգային բարոյական արժեքներ: Մինչդեռ, Ամերիկյան բազմազգ և իր մեջ միանգամից մի քանի մշակույթներ համադրող պետություն էր: Այն գտնվում էր զարգացած կապիտալիստական հարաբերությունների փուլում, ինչով էլ պայմանավորված էր այն ծայրահեղ պրագմատիկ մտածողությունը, որը հատուկ էր ամերիկացիների գերակշռող մասին: Նման պարագաներում բնավ էլ զարմանալի չէր լինի, եթե Արուսյանները դժգոհեին իրենց նոր հայրենիքից: Սակայն ԱՄՆ-ի կյանքը ավելի շատ հակված էին վատաբանել պանդուխտների երկրորդ սերնդին պատկանողները: Դրանցից մեկը վեպի հերոս Գերարդ Բալաքյանն է: Փիթեր Բալաքյանի խոսքերով, իր հայրը ոչ մի կերպ չէր կարողանում համակերպվել ամերիկյան մշակույթին, չէր ընդունում

տեղի բարոյական չափանիշները: Գերարդ Բալաքյանը տիպիկ ահպանողական էր, որը դեռևս ամուր կառչած էր իր ազգային ակունքներին: Բայց չէ՞ որ Նաֆինա Արուսյանը ևս չէր խզել իր կապը ազգային մշակույթի հետ, սակայն չէր էլ ցանկանում ծայրահեղ կերպով մեկնաբանել ԱՄՆ-ի կյանքը: Ինչե՞ս բացատրել հայ տարագիրների այս երկու սերունդների հոգեբանության միջև առկա բեկումը: Այս առնչությամբ կարելի է երկու ենթադրություն անել» 1. տարագիրների առաջին սերունդը չէր դժգոհում իր նոր հայրենիքից, քանի որ առաջնային էր համարում հայ ժողովրդի ֆիզիկական գոյության պահպանումը, 2. Արուսյանները չեն քննադատում ԱՄՆ-ը, քանի որ չեն ցանկանում իրենց վրա երախտամոռի կնիք դնել: Այդ ամերիկացիներն էին, որ մեծահոգաբար ապաստան տվեցին եղեռնից փրկված տասնյակ հազարավոր հայերի: Նման քայլը, հիրավի, արժանի էր գնահատման: Այդուհանդերձ, վեպում պատկերված երկրորդ սերունդը բնավ էլ չի գնահատում ամերիկայի ժողովրդին և սրտնեղում է գաղթականի իր կարգավիճակից: Արդյո՞ք Գերարդ Բալաքյանների ցուցաբերած վերաբերմունքը խոսում է նրանց անհանդուրժողականության և երախտամոռության մասին, թե՞ այստեղ կա ինչ-որ այլ, ավելի լուրջ գործոն: Վեպը տալիս է այս հարցի պատասխանը: Գերարդ Բալաքյանները չէին հանդուրժում իրենց նոր հայրենիքի մշակույթը ոչ միայն այն պատճառով, որ դա հակադրվում էր հայկական կուլտուրային, այլև այն պատճառով, որ այն ուղղակիորեն կլանում էր հայ պանդոխտների երրորդ սերունդը: Այստեղ խոսքը վերաբերում է ձուլման վտանգին, որը մտահոգություն, վախ, նույնիսկ սարսափ էր սերմանում Գերարդ Բալաքյանի նման ազգասերների մեջ: Նրանք չէին ցանկանում, որ իրենց զավակներն ամերիկացվեն և, ի տարբերություն Կիյուռքահայերի առաջին սերնդի, ամեն կերպ խոչընդոտում են այդ կործանարար գործընթացին: Իսկ թե ինչ է դրանից ստացվում, տեսնում ենք դարձյալ «Ճակատագրի Սև Շունը» վեպում: Բոլոր սփյուռքահայ գրողները, նաև Փ. Բալաքյանը, անուղղակիորեն խոսել են տարագրության օրենքների մասին: Ըստ այդ օրենքների, այն մարդը, որ կտրված է իր հարազատ հողից և ստիպված է ապրել որևէ օտար ժողովրդի մեջ, քայլ առ քայլ օտարվում է իր էթնիկական ակունքներից: Հաջորդ սերունդների վրա այս երևույթը ավելի նկատելի ձևով է տարածվում: Սրանում համոզվում ենք հատկապես այն ժամանակ, երբ համեմատության մեջ ենք դնում «Ճակատագրի Սև Շունը» վեպի երկու հերոսներին՝ Բալաքյան հորը և Բալաքյան որդուն: Սփյուռքահայ գրողը պատմում է, որ ինքը մինչև պատանեկության հասակը հստակ պատկերացում չի ունեցել այն մասին, որ ինքը ազգություն է հայ է: Եվ սա այն դեպքում, որ Փիթերը ծնվել էր հայ գաղթօջախում և հայ ընտանիքում: Բալաքյանը չի տիրապետում իր մայրենի լեզվին, չի ճանաչում իր ազգի մշակույթը, և չգիտի հայ ժողովրդի պատմությունը: Սակայն նա անգլերենին տիրապետում է այնպես, կարծես դա իր մայրենի լեզուն լինի, հաճախում է ամերիկյան դպրոց, շփվում է ամերիկացի երեխաների հետ և ընդօրինակում նրանց բարքերն ու սովորույթները: Ի՞նչ հայկական բան կար տարագիրների երրորդ սերնդին պատկանող այդ հայի մեջ: Թերևս ոչինչ, բացի այն գենետիկ ազգային հիշողությունից, որի շնորհիվ նա մի օր վերհանում է իր էթնիկական արմատները, իսկ այնուհետև համառ ջանքեր թափում՝ իր հոր կողմից ավարտին հասցված գործը վերջացնելու համար: Խոսքն այստեղ վերաբերում է այն պայքարին, որ Գերարդ Բալաքյանը շարունակ մղում էր՝ իր որդուն ամերիկացումից փրկելու համար: Երբ Փիթերը դեռ փոքր էր, նա չէր հասկանում, թե ինչու է իր հայրը

վրդովվում, երբ տեսնում է, թե ինչպես են իր զավակները սպունգի նման կլանում օտար մշակույթը: Գերարդ Բալաքյանը ջանում է դադարեցնել այդ հակահայկական գործընթացը, սակայն նրան դա չի հաջողվում: Ձուլման օրենքներն ավելի ուժեղ գտնվեցին, քան Գերարդ Բալաքյանի նման մարդիկ: Այդ իսկ պատճառով Փիթեր Բալաքյանի սերունդը ևս մեկ քայլ է անում դեպի սփյուռքահայության բարոյական ոչնչացումը: «Ճակատագրի Սև Շունը» նշում է նաև մեկ այլ կարևոր գործոն: Այդ գործոնը այն ազգապահպան բնագոյն էր, որ ժառանգաբար անցնում էր մի սերնդից մյուսին: Հենց այդ բնագոյն էր, որ կոչված էր պահպանելու սփյուռքահայության ազգային գիտակցությունը 1915 թվից մինչև արդի ժամանակները: Ասվածից կարող ենք եզրակացնել, որ տարագիր հայության կյանքում կային երկու հակադիր ուժեր. արդեն նշված ձուլման օրենքները և դրա դեմ պայքարող ազգապահպանման բնագոյնը:

Այն, ինչ արդեն ասվեց պանդխտության երևույթի՝ բալաքյանական ընկալման և զնահատման մասին, լիովին չի արտահայտում այն խորը ուսումնասիրությունը, որին ենթարկվել է ամերիկահայության կյանքը «Ճակատագրի Սև Շունը» վեպում: Փիթեր Բալաքյանը զարմանալի խորությամբ է թափանցել պանդխտության հիմնախնդրի մեջ և կարողացել է վերհանել շատ սուր ու հակասական հարցեր: Այդ իսկ պատճառով նա իր պատշաճ տեղն է գրավում պանդխտության թեման լուսաբանած հեղինակների շարքում:

Գեղարվեստական պատկերման առումով «Ճակատագրի Սև Շունը» վեպը, անկասկած, որոշակիորեն զիջում է Է.Գրոսբլոուսի «Արարատ», Զ.Սուրմեյանի «Զեզ եմ դիմում, տիկնայք և պարոնայք» և Փ.Նաջարյանի «Հիշողության դստերը» վեպերին: Բալաքյանի գրքի պատմական գլուխների լեզուն սեղմ է և չոր, քանի որ դրանց հիմքում ընկած են փաստագրական նյութեր: Բայց հենց վերջիններիս շնորհիվ է, որ ցեղասպանությունը ներկայացված է առավել համոզիչ ու ազդեցիկ ձևով: Ինչ վերաբերում է վեպի այն գլուխներին, որոնցում լուսաբանված են հայկական եղեռնի բարոյահոգեբանական հետևանքները, ապա դրանք զգալիորեն տարբեր են: Տվյալ դեպքում պատկերման լեզուն ավելի հարուստ է ու ճկուն: Բալաքյանական ոճը շատ անկեղծ է ու սրտաբուխ, նրա կերտած կերպարները գունագեղ, բայց միևնույն ժամանակ ռեալիստական են: «Ճակատագրի Սև Շունը» հագեցված է հոգեբանական խոր դիտարկումներով, մարդկային հոգեվիճակների և տրամադրությունների փայլուն նկարագրություներով: Կարելի է վստահաբար ասել, որ Փիթեր Բալաքյանը իր ստեղծագործությամբ կայուն տեղ գրավեց համաշխարհային գրականության մեջ:

ТЕМА АРМЯНСКОГО ГЕНОЦИДА И ЭМИГРАЦИИ В РОМАНЕ ПИТЕРА БАЛАКЯНА “ЧЕРНАЯ СОБАКА РОКА”

Т.Э. МАЛУМЯН

Резюме

Тема армянского геноцида занимает центральное место в американской литературе. Проблема геноцида армян представлена в творчестве многих американских писателей. Среди последних свое достойное место занимает имя Питера Балакяна. Автор романа “Черная Собака Рока” описывает трагические события 1915г. в глубокой исторической перспективе. Помимо событий 1915г. П.Балакян обращается также к теме эмиграции и проблеме ассимиляции.